«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» ապրիլի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-08/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի 31.03.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 31.03.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-

15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

27.02.2015թ. «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն դիմում է ներկայացրել Պատվիրատուին՝ «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) պարզաբանում ստանալու վերաբերյալ:

04.03.2015թ. Ընկերությունը ևս մեկ դիմում է ներկայացրել Պատվիրատուին, որով հայտնել է այն մասին, որ 27.02.2015թ. դիմումի պատասխան չի ստացել: Ի պատասխան վերոհիշյալ դիմումի՝ Պատվիրատուն հայտնել է, որ 27.02.2015թ. դիմումի վերաբերյալ պատասխանը ուղարկվել է Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին:

05.03.2015թ. Ընկերության կողմից հերթական, թվով 3-րդ նամակն է հասցեագրվել Պատվիրատուին: Գրության վրա Պատվիրատուի կողմից նշում է կատարվել հետևյալ բովանդակությամբ. ««Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ հայտերի բացման վերջնաժամկետից առնվազն 5 օրացուցային օր առաջ ստացված պարզաբանման հարցումներին պատվիրատուն պատասխանում է սահմանված կարգով: Նշված ժամկետից հետո ստացված որևիցե պարզաբանման հայտատուն չի պատասխանում»:

Ըստ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի՝ Պատվիրատուն դրսևորելով կամայականություն, ոչ պատշաճ կերպով է կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները՝ չի տրամադրել անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացված հրավերի վերաբերյալ և անտեսել է Ընկերության ողջամիտ և գնահատման արժանի առաջարկը, ինչի արդյունքում Ընկերությունը ստիպված չի մասնակցել Ընթացակարգին, քանի որ Պատվիրատուից չի ստացել հրավերի էական պայմանների մասին անհրաժեշտ պարզաբանումներ:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընթացակարգի հրավերի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները սյունյակի 2-րդ կետի «գ» և «դ» ենթակետերում նշվել են. «գ) լվացքի ժամանակ կիրառել միայն սերտիֆիկացված, SANO ֆիրմայի լվացքի նյութեր, դ) ախահանումը կատարել ավտոկլավով՝ բարձր ջերմո-ախտահանման

եղանակով, 2.2-3.6 կգ/ք.ոմ աշխատանքային ճնշումով, 135 աստ. ցելս. ջերմաստիճանով, սարքավորման տեսակը՝ ԳԿ-100-2»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները սյունյակի 3-րդ կետի «բ» և «դ» ենթակետերում նշվել են. «բ) ախտոտված, ինֆեկցած և արյունոտ սպիտակեղենը ընդունել ամեն օր առավոտյան ժ. 8:30-9:00 և լվացված սպիտակեղենը հանձնել պատվիրատուին ժ. 12:30-13:00, դ) ախտոտված, ինֆեկցված և արյունոտ լվացքը ստանալուց հետո չորս ժամվա ընթացքում պետք է հանձնվի պատվիրատուին մաքուր վիճակով»:

Ընկերությունը նշել է, որ «բ» և «դ» ենթակետերում առկա են ժամային տարաբերություններ, որոնք տարընթերցման հնարավորություն են տալիս, քանի որ «բ» ենթակետը բառացի ընթերցելու դեպքում ժամային հատվածը կազմում է 4,5 (չորս ու կես), այլ ոչ թե 4 (չորս) ժամ, ինչպես նշվել է «դ» ենթակետում, որի վերաբերյալ նույնպես պարզաբանում չի տրվել:

Ընկերությունը ներկայացրած բողոքում տեղեկացրել է նաև, որ Պատվիրատուի կողմից սահմանված ծառայությունների մատուցման և դրանց հանձնման-ընդունման համար նախատեսված 4 (չորս) կամ 4,5 (չորս ու կես) ժամկետները ողջամիտ չեն, քանի որ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն, հանդիսանալով լվածքի ծառայություններ իրականաց-նող կազմակերպություն, քաջ տիրապետում է տվյալ գործընթացին և հավաստիաց-նում, որ լվացքի ծառայությունների մատուցումն անհնար է իրականացնել 4-4,5 ժամ-վա ընթացքում, այն էլ՝ որակյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետով՝ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն խնդրել է

ապօրինի հայտարարել «Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լվացքի ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

Կենտրոնում 15.04.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած քննարկմանը «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացուցիչը ընդունել է, որ հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու իր դիմումում նշված է ոչ թե «չորս կամ չորս ու կես ժամ», այլ «վեցից չորս ժամ» արտահայտությունը, ընդ որում, «վեցից չորս ժամ» արտահայտությունը նշվել է թյուրիմացաբար, քանի որ «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերում ոչ մի տեղ նշված չէ «վեց ժամ» արտահայտությունը, և ինքը, ըստ երևույթին, շփոթել է Պատվիրատուի կողմից նախկինում հայտարարված մեկ այլ ընթացակարգի հրավերի տեքստի հետ, որի համաձայն լվացքը պետք է հանձնվեր ստանալուց հետո վեց ժամվա ընթացքում:

2. **<u>«Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**

«Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 07.04.2015թ. թիվ 08-78 գրությամբ ներկայացրել է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի պարզաբանման վերաբերյալ դիմումը «Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ստացել է 27.02.2015թ.՝ աշխատանքային ժամերից հետո, ուստի համապատասխան անձանց հանձնվել է 02.03.2015թ., որից հետո կազմակերպվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ և մեկ օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատասխանն ուղարկվել է Ընկերությանը: Բացի այդ, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ նշված պարզաբանման մասին հայտարարությունը նույն օրը հրապարակվել է նաև պաշտոնական տեղեկագրում:

Այնուհետև, Ընկերությունը 04.03.2015թ. կրկին դիմում է ներկայացրել Պատվիրատուի գնումները համակարգողին այն մասին, որ հրավերի պարզաբանումը չի ստացել, որին անմիջապես պատասխանվել է՝ դիմումի վրա նշում կատարելով:

05.03.2015թ. Ընկերությունը երրորդ անգամ է դիմել Պատվիրատուի գնումները համակարգողին, որին նույնպես պատասխանվել է տեղում՝ պարզաբանման համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետների մասին հիշեցումով:

«Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է նաև, որ Ընկերությունը 13.03.2015թ. բողոքի կրկնօրինակն ուղարկել է Պատվիրատուին, որը սակայն ընդունվել է ի գիտություն, քանի որ բողոքի քննումը «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի լիազորությունն է: Ըկերության հիմնական հարցադրումները ներկայացված են եղել առաջին դիմումում, ընդ որում Ընկերության երկրորդ հարցը ժամերի անհամապատասխանության մասին է եղել, սակայն հրավերում որևիցե տեղ վեց կամ չորս ժամի մասին խոսք անգամ չի նշվել, այլ առկա է լվացքի հանձնման ժամային տիրույթ և ընդունման ժամային տիրույթ և որևիցե տարաբնույթ ընթերցում չի կարող լինել:

«Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն նշել է, որ ուշագրավ է այն փաստը, որ Ընկերությունը մի դիմումով բողոքում է պարզաբանում չստանալու համար, սակայն հաջորդ դիմումով ընդունում է պարզաբանումը ստացած լինելու փաստը:

Ինչ վերաբերում է ծառայությունների իրականացման ժամային հատվածի ողջամտությանը, ապա դա պայմանավորված է Պատվիրատուի աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով (հերթափոխեր, հիվանդների դուրս գրում, վիրահատական և ինվազիվ միջամտությունների ժամային գրաֆիկ և այլն), արդարացված է Պատվիարատուի կարիքներով և որևիցե ընկերություն չպետք է խոչընդոտի դրան և իրեն իրավունք վերապահի, ըստ իրենց, ողջամիտ լուծումներ պարտադրելու:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն գտնում է, որ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներակայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Կենտրոնում 15.04.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերում ոչ մի տեղ նշված չէ «վեց ժամ» արտահայտությունը (քննարկման ժամանակ

վերոհիշյալ փաստը ընդունել է նաև Ընկերությունը), հետևաբար՝ գտնում է, որ հարցումն այդ մասով դուրս է հրավերի բովանդակության շրջանակից, ինչի պատճառով դրա վերաբերյալ պարզաբանում չի տրամադրել:

Կենտրոնի այն հարցին, թե Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին Ընթացակարգի հրավերը համապատասխանացնելու նպատակով Պատվիրատուն ինչու չի կատարել դրանում համապատասխան փոփոխություններ, Պատվիրատուն հայտնել է, որ հրավերում փոփոխություն կատարելու փոխարեն «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին տրված հրավերի պարզաբանմանբ թույլատրվել է ներկայացնել հրավերում նշված ֆիրմային անվանմանը և մոդելին համարժեք ապրանք: Պատվիրատուն գտել է, որ դա բավարար է, քանի որ այդ պարզաբանման մասին հայտարարությունը նաև նույն օրը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

3. <u>ԳԲԽ-08/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի 31.03.2015թ. ներկայացրած բողոքը, «Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 07.04.2015թ. թիվ 08-78 գրությունը և կից փաստաթղթերը, «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-08/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լվացքի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Ընթացակարգի հրավերի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները» սյունյակում լվացքին ներկայացվող տեխնիկական պահանջների վերաբերյալ «գ» և «դ» ենթակետերում սահմանվել են հետևյալ պահանջները՝

գ) լվացքի ժամանակ կիրառել միայն սերտիֆիկացված, SANO ֆիրմայի լվացքի նյութեր,

դ) ախտահանումը կատարել ավտոկլավով՝ բարձր ջերմո-ախտահանման եղանակով, 2.2-3.6 կգ/ք.սմ աշխատանքային ճնշումով, 135 աստ. ցելս. ջերմաստիճանով, սարքավորման տեսակը՝ ГК-100-2:

3. Հրավերի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները» այունյակում լվացքի ընդունման-հանձնման և տեղափոխման պահանջների վերաբերյալ «բ» և «դ» ենթակետերում սահմանվել են հետևյալ պահանջները՝

բ) ախտոտված, ինֆեկցված և արյունոտ սպիտակեղենը ընդունել ամեն օր առավոտյան ժ. 8:30-9:00 և լվացված սպիտակեղենը հանձնել պատվիրատուին ժ. 12:30-13:00,

դ) ախտոտված, ինֆեկցված և արյունոտ լվացքը ստանալուց հետո չորս ժամվա ընթացքում պետք է հանձնվի պատվիրատուին մաքուր վիճակով:

4. 27.02.2015թ. «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն, դիմելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), խնդրել է տալ պարզաբանում հետևյալ հարցադրումների վերաբերյալ.

Հարցադրում 1. Հրավերում ներառված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ սարքավորման կոնկրետ մոդելին և կիրառվող նյութերի ֆիրմային նշանին, ինչն արդյոք չի հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին:

Հարցադրում 2. Ծառայության համար վեց, թե չորս ժամ է հատկացվում և ինչով է հիմնավորված ծառայությունների մատուցման և դրանց հանձնման-ընդունման համար սահմանված ժամկետների ողջամտությունը:

5. 27.02.2015թ. «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի Հանձնաժողովին ուղղված պարզաբանման դիմումը ստացվել է 02.03.2015թ.:

6. Գնահատող հանձնաժողովի 2015թ. մարտի 2-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը:

1-ին հարցադրման վերաբերյալ տրվել է հետևյալ պարզաբանումը.

«Հրավերում նշված սարքավորման ամբողջական բնութագիրը, ինչպես նաև դրա տեխնիկական տվյալները լիարժեք նկարագրել հնարավոր չէ, ուստի կատարվել է հղում մոդելին: Տվյալ դեպքում մասակիցները կարող են ծառայությունները իրականացնել նաև այլ տեխնիկական միջոցներով, որոնք ապահովում են ֆունկցիոնալ և որակական համարժեքությունը նշված մոդելին: Ինչ վերաբերում է կիրառվող նյութերի ֆիրմային նշանին կատարված հղմանը, ապա տվյալ դեպքում նույնպես հնարավոր մասնակիցները կարող են Պատվիրատուին առաջարկել այլ արտադրողի նյութեր, սակայն պարտադիր պայման է հանդիսանում դրանց որակի սերտիֆիկատի առկայությունը, ինչպես նաև բաղադրությամբ հրավերով նշված նյութին համարժեք լինելու փաստը»:

2-րդ հարցադրման վերաբերյալ տրվել է հետևյալ պարզաբանումը.

«Ծառայությունների մատուցման ժամկետներին վերաբերող պահանջը Պատվիրատուի որոշման իրավասությունն է և բխում է Պատվիրատուի կարիքի առանձնահատկություններից: Սույն դեպքում հիմք է ընդունվել Պատվիրատուի գործունեության բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունը և բխում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներից, ինչպես նաև չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրության որևիցե մի կետի»:

7. Գնահատող հանձնաժողովի 2015թ. մարտի 2-ի թիվ 2 որոշմամբ հաստատված Հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը 03.03.2015թ. հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև պարզաբանումն ուղարկվել է «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին:

8. ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերի բացումը տեղի է ունեցել 2015թ. մարտի 6-ին ժամը 14:30-ին:

9. Գնահատող հանձնաժողովի 2015թ. մարտի 6-ի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով կայացրած որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած, հաղթող մասնակից է ճանաչվել «Լեվան» ՍՊԸ-ն:

10. Պատվիրատուի և «Լեվան» ՍՊԸ-ի միջև 2015թ. մարտի 16-ին կնքվել է ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21 ծառայությունների գնման պայմանագիր:

4. ԳԲԽ-08/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Վերը նշված հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Նկատի ունենալով, որ Հանձնաժողովի 2015թ. մարտի 2-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը, որը 03.03.2015թ. հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am համացանցային կայքում և պարզաբանումը ուղարկվել է «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին, ուստի «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած այն պնդումը, որ Պատվիրատուն դրսևորել է կամայականություն և չի տրամադրել անհրաժեշտ պարզաբանումներ հրավերի վերաբերյալ, անհիմն է:

Բացի այդ, Կենտրոնում 15.04.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած քննարկման ժամանակ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացուցիչը ընդունել է, որ «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերում ոչ մի տեղ նշված չէ «վեց ժամ» արտահայտությունը և ինքը, ըստ երևույթին, շփոթել է Պատվիրատուի կողմից նախկինում հայտարարած մեկ այլ ընթացակարգի հրավերի տեքստի հետ:

Պատվիրատուի կողմից սահմանված ծառայությունների մատուցման ժամկետի ողջամիտ չլինելու Ընկերության ներկայացրած փաստարկի վերաբերյալ հայտնում ենք, որ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին այդ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերն Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին հակասելու վերաբերյալ Ընկերության ներկայացրած փաստարկին, ապա գտնում ենք, որ այն հիմնավոր է, քանի որ Պատվիրատուն Ընթացակարգի գնման առարկան բնութագրելիս հղում է կատարել ֆիրմային անվանմանը (SANO ֆիրմայի լվացքի նյութեր) և մոդելին (սարքավորման տեսակը՝ ГК-100-2»)՝ չօգտագործելով «կամ համարժեք» բառերը, որով խախտել է Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը:

Միևնույն ժամանակ անընդունելի է Պատվիրատուի այն պնդումը, որ Հրավերում նշված ֆիրմային անվանմանը և մոդելին համարժեք ապրանք ներկայացնելու հնարավորությունը մասնակիցներին վերապահվել է ոչ թե հրավերի փոփոխությամբ, այլ 03.03.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված հրավերի պարզաբանման մասին հայտարարությամբ, քանզի պարզաբանումը տրվում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների վերաբերյալ և պարզաբանմամբ ընթացակարգի հրավերում չեն կարող սահմանվել փոփոխություններ կամ կատարվել լրացումներ:

Բացի այդ, հրավերում կատարված փոփոխությունը կամ լրացումը և հրավերի վերաբերյալ տրված պարզաբանումը իրավական տարբեր ինստիտուտներ են՝ իրենց տարբեր իրավական կարգավորումներով և հետևանքներով, քանի որ հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, ինչը հնարավորություն է ընձեռում մասնակիցներին այդ ժամկետում ծանոթանալ հրավերի փոփոխությանը և արդյունավետ իրացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածով գնման գործընթացին մասնակցելու իրավունքը, մինչդեռ հրավերի վերաբերյալ տրված պարզաբանումը նման իրավական հետևանքներ չի առաջացնում:

Նման պայմաններում, քանի որ «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները, ուստի առաջարկում ենք «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի 31.03.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ «Նորք-Մարաշ» Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լվացքի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-08/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան